

Յաւելուած «Մուրճ» ամսագրի

ԶԻՅՄՍ ՄՕՐԻԻՐ

ՀԱՋԻ ԲԱԲԱՅԻ

ԱՐԿԱԾՆԵՐԸ

ԱՆԳԼԻԱՅՈՒՄ



Վ Է Պ



Թարգմ. անգլ. բնագրից

Մ Կ Ր. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

(Նոր-Ջուլայեցի)



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Էլեկտրագրւոյ տպարան «ՀԻՐՄԷՍ» ընկերութեան
1905

Дозволено цензурою Тифлисъ 1905 г. 11 марта.

Հաջի Բարան բոլորովին մի կարեւոր անձնաւորութիւն դարձած՝ հրծուծ է իր բարձր աստիճանով։—Երան յանձնարարուած է ընծաներ ժողովել նախ քան Շահի ղեսպանի Անգլիա ճանապարհովը։

Երբ ես Սպահան մտայ որպէս Շահի գործակալ, այնքան քամի էր մտել գլուխս, ու քիթս այնքան բարձրացել էր, որ ես իմ քաղաքակիցներէ՝ սպահանցիներէ վրայ նայեցի այնքան ցած աչքով՝ որպէս թէ նրանք ճանապարհիս վրայ ընկած քարերը լինէին։ Շատ բարեբախտաբար, մայրս և իր ամուսին ախոռնդը թողել, հեռացել էին քաղաքից և բնակուել էին մի լեռնային գիւղում, որ ախոռնդի ծննդավայրն էր, և որը դրանք նրաւ էր մօտաւորապէս 15 ֆարսաղ հեռու՝ քաղաքից դուրս. հետեւապէս նրանք արգելք չհանդիսացան իմ փառքին ու մեծութեանը։

Գալով արքունական քարվանսարայի դռնապան ծերունի Ալի Մոհամէտին, որի ներկայութիւնը հաւանականաբար խափան կը հանդիսանար իմ փառասիրութեանը՝ նա էլ շտապել էր հետեւելու խեղճ հօրս դէպի գերեզման, և անողորմ Սպահանը ¹⁾ արդէն վաղուց նրա հոգին բաժանել էր նրա մարմնից։

Ես գրեթէ բնազդամբ խոյս էի տալիս, հեռու էի պատահում ինձ՝ հօրս սափրիչի խանութի մօտերէից, որը պատանութեանս հասակի և յետագայ արկածների հանդիսավայրն էր։ Եւ, յիշաւի, ես շատ քիչ հաճոյք էի զգում տանից դուրս. տանը ես աշխատում էի, որքան կարելի էր՝ շատ վայելել այն առանձնաշնորհումները, որոնք կցուած էին իմ արժանապատւութեանն ու բարձր աստիճանին։

Ես ոչ ոքի չէի զիջում յանձնել պատուոյ աթոռը՝ բացի քաղաքագետին, այն էլ մի հեղինակաւոր անձի յատուկ յամառութեամբ—այնպիսի անձի՝ որը, մինչդեռ ստիպում է ուրիշին նստել պատուոյ աթոռի վրայ՝ միևնոյն ժամանակ ցոյց է տալիս, որ դրանով նա բոլորովին չէ հրաժարուած դրանից, իրաւունքը բոլորովին ձեռքից չէ տալիս։ Այնպիսի մարդու, որը բոլորովին անծանօթ էր իմ ծագումին, իմ վարքագիտութիւնը և խօսակցութեան ձևերը բոլորովին բնական պիտի ե-

¹⁾ Սպահանը, ըստ մահմետական հաւատի, մահուան հրեշտակն է, որը մի ճշմարիտ հաւատացեալի մահուան վերջին բոլէին նրա հոգին բաժանում է նրա մարմնից։

րեային, որովհետեւ ես ինձ լաւ հանգիստ էի պահում, չէի շփոթւում կամ վարանում իմ նոր բնաւորութեան մէջ:

Քիչ կարեւոր չէր այն գործը, որի կատարումն յոնձնուել էր ինձ, քանի որ մի մասնաւոր ֆիրմանով ինձ հրամայուած էր՝ Սպահանից, Շիրազից և Նրանց գաւառներից ժողովել գրեթէ այն բոլոր ընծաները, որ մտածւում էր ուղարկել անգլիական թագաւորին նոր ընտիր դեսպանի ձեռքով:

Գլուխս վկայ, բարեկամ հաջի, դու շատ բախտաւոր աստղի ներքոյ ես ծնուել, ասում էի ինքս ինձ երբեմն: Ահաւասիկ քո ձեռքի մէջ են դրուած Պարսկաստանի երկու ամենամեծ քաղաքների և Նրանց գաւառների բնակիչների մօրուքները, որպէս զի դու հաճեցածդ ժամանակ փետեա նրանց:

Բայց յետոյ, յիշելով այն օգտակար դասերից մի քանիսը, որ իմ անցեալ կեանքի արկածներն ու փոփոխութիւնները աւանդել էին ինձ, ես վճռեցի այնպէս մի ընթացք ըռնել, որի մէջ խոհեմութեան ձեռքը առաջնորդ հանդիսանար չափաւորութեան ձեռքին, և մի անգամ ցոյց տալ սպահանցիներին թէ՛ խիղճը մի բան է, որ գոյութիւն ունի իրանց քաղաքացիներից դոնէ մէկի սրտում:

Իմ ֆիրմանին կցուած էր մի հրահանգ, որը ֆիրմանի հետ միասին ճանապարհորդութեանս միջոցին թէհրանից մինչև Սպահան՝ յաճախ իմ մտածութիւնների առարկաներն էին եղել, նա մանաւանդ որ, Նրանց բովանդակութեան մէջ կար մի որոշ բառ, որը շարունակ զբաղեցնում էր միտքս, և որը իմ փառասիրութիւնը հասցրեց մի բարձրութեան՝ որ սահմանից դուրս էր: Հրամանագրի մէջ ինձ տրուած էր Ալիշան ¹⁾ ածականը—ալիշան Հաջի Բարա:

Եթէ իմ ընթերցողների թւում կան այնպիսիներ, որոնք ճանաչում են պարսիկներին և գիտեն թէ մենք ինչեր ենք, նրանք կարող են իսկոյն ստուգել իմ հրճուանքի պատճառը. իսկ նրանք՝ որոնք մեզ չեն ճանաչում, պիտի ասել որ, եթէ մեր մէջ կայ փառասիրութեան մէկ կէտ, որ աւելի մեծ է քան միւսը՝ դա ալիշա մակղիրով կոչուելու իղձն է: Ուրեմն, իմ աստիճանը կեանքի մէջ արդէն որոշուած, հաստատուած էր:

Ես յուսով էի, որ անուանս վրայից իսպառ բարձուել էր այն միակ, նուաստ, մահացուցիչ ալիշան ²⁾ ածականը, որով

¹⁾ Վսեմապատիւ կամ բարձրաստիճան:

²⁾ Թէպէ ալիշա և ալիշան համարեա միևնոյն իմաստն ունին, այս ինքն՝ բարձր, վսեմ և այլն, այնուամենայնիւ սովորութիւնը մեծ տարբերութիւն է առաջադրելի նպատակ առաջինին: Դա մի տիպոգոս է որ տրուած է

ցարդ ես կոչուել էի թէ որպէս դահճապետի պաշտօնեայ, թէ որպէս մոլլա և թէ որպէս վաճառական: Այո՛, ես ֆիսա բարով ասացի ալիշանին: Երևակայութիւնս հազիւ հազ կարողանում էր պարունակել իր մէջ փառքի և աշողութեան այն պատկերները, որոնցով ես հաճոյք էի զգում լցնել նրան:

«Թող այդ ողորմելի դէները, այդ ալիշանները այժմ թագ-ցընեն իրանց երեսները նուաստութեան թևի տակ, ասացի ես ինձ ու ինձ: Ես որ ալիշա եմ, կարող եմ գլուխս բարձր պահել ու արևին նայել առանց պատժուելու դրա համար»:

Եւ ես չսեղմեցի զգացումներս սոսկ բաւերի սահմանի մէջ, որովհետեւ նրանք՝ որոնք ինձ ճանաչում են, անշուշտ գիտեն, որ ի՛նչ ոք երբեք չէ կարողացել իր պատուարժանութիւնն ու դիրքը պահպանել աւելի լաւ քան ես: Ես առանց դանդաղելու, առանց քաշուելու «քո»-ով և «քեզ»-ով էի խօսում ինձ հաւասար մարդկանց հետ, և դամադադ ջ'աղ աստ 2) էի հարցնում անպիտի մի անձնաւորութեան գերադաս տոնով, որը իր պաշտպանութեան տակ է առնում ուրիշին:

Ես որքա՛ն էի հրճւում, երբ կարողանում էի մի այցելուի ասել՝ «նստի՛ր», փոխանակ ասելու «հաճեցէ՛ք հրամայել»—մի բանաձև՝ որին շրթունքներս ցարդ սովոր էին: Ինձ թւում էր թէ կատարեալ երաժշտութեան ձայն էր հնչում ականջիս, երբ իմ խօսակիցը դիմում էր ինձ «տէ՛ր» և «խշխան» ուղցնող մակդիրներով—ինձ, որ ամբողջ կեանքուս բախտի ձեռքը դեռ երբէք չէր շնորհել իր գգուանքը առանց շուտով տալու մի համապատասխան ասպտակ:

Շահի՛ ինձ տուած հրահանգը հետևեալ մտքով էր:—«Որ ալիշա Հաջի Բաբան, պիտի գործ դնի իր բոլոր ջանքերը հանդերձ այն իմաստութեամբ, որի համար նա անուանի է, հոգալու տարբեր կոչման ու անուան տէր զանազան գլուխ ստրուկներ 3), որ արժանի լինին ընծայուելու Ֆրանկների թագաւորին. որ նրանք պիտի հմուտ լինին զանազան արուեստների մէջ, և որ պիտի ընտրուի դրանցից գոնէ մէկը, որ ամենաայլանդակը լինի և արդէն պատրաստ լինի ծառայելու որպէս պահապան անհաւատի կանանոցի վրայ:

յայտնի աստիճանադրներին, այն ինչ վերջինը տրւում է հասարակութեան միջակ դասակարգի անդամներին:

Մ. Թ.

2) Քիմք առողջ է, կամ ուղեղը առողջ վիճակի մէջ է:

Մ. Թ.

3) Պարսկաստանում ձիերը, էջերը, ջորիները, կովերը, ուղտերը ոչխարները և ստրուկները գլուխներով են վաճառւում, օրինակի համար, մէկն ասում է ես հարիւր գլուխ ոչխար ունիմ, դու քանի գլուխ կով ունիս, նա քանի գլուխ ստրուկներ ունի և այլն:

Մ. Թ.

«Որ, ի նկատի ունենալով օրհնեալ Մարգարէի (որի վերայ լինի օրհնութիւնս և խաղաղութիւնս) սուրբ պատուիրանք թէ՛ պէտք է տալ նրանց՝ որոնք չունին և պէտք է ողորմած լինել դէպի նրանց՝ որոնք կարօտութեան մէջ են՝ ուստի յիշեալ Հաջի Բաբային պատուիրում է հոգալ տեսակ-տեսակ ձիեր—արարական, թիւրքմէնի և այլն, որպէսզի երբ նրանք ընծայուեն Փրանկների թագաւորին՝ զարմանք ու հիացմունք պատճառեն նրա անհաւատ հպատակներին, և միևնոյն ժամանակ էլ օտար երկրում բարձրացնեն թագաւորաց թագաւորի վարկը. նաև, որպէս մասնաւոր շնորհաց և բարեկամութեան նշան դէպի յիշեալ Փրանկները, Հաջի Բաբան պիտի հոգայ, եթէ կարելի է ձեռք բերել, մի մատակ ևս, և աւելացնել ուղարկելիք ընծաների վրայ, և այդպիսով շնորհել լաւ ձիեր ունենալու մշտնջենական օրհնութիւնը նրանց՝ որոնք այժմ միայն եարուններ ունին, և աղնուացնել մինչև այժմ գետնի վրայ քաշ եկող եարունների սերունդը, որպէս զի նրանց 1) գլուխները բարձրանան, հասնեն հինգերորդ երկինքը:

«Որ, քանի որ արքայից արքայի պատուարժանութեանը վայել է պատույ զգեստներ ու բարձր համարում շնորհել նրանց՝ որոնց նա սիրում է, ուստի յիշեալ Հաջի Բաբային հրամայւում է ընտրել և սեփականացնել Սպահանի, Շազդի և Քաշմիրի արքայական գործարաններում գիտութեան ձեռքով պատրաստուած բաւականաչափ ճամկաւոր դիպակի, մետաքսի և թաւշի այն տեսակներից, որ յարմար լինի օրհնեալ Իսայի (Յիսուսի) հետևողների ճաշակներին, կարիքներին և հաճոյքներին, որպէսզի Անգլիայի Շահը իր ճաշակի և հաճոյքի համեմատ զգեստներ պատրաստել տայ նրանցից:

«Որ, որպէս զի ապացուցուի Շահի սէրը դէպի ամբողջ Փրանկ ազգը—թէ՛ պրու, և թէ՛ էգ, յիշեալ Հաջի Բաբային հրամայւում է զբաղեցնել վարպետ դերձակներ և հմուտ ձեւորարներ՝ Փրանկների թագուհու համար պատրաստելու երկու ամբողջ ձեռք զգեստ, նման նրանց՝ որ արքունական հարեմի բանուն հագնում է. և որ այդ զգեստները պիտի պատշաճ կերպով զարդարուած լինին թանկագին քարերով—թէ՛ ետևից, թէ՛ առաջից, թէ՛ վերևից և թէ՛ վարից. նաև այդ զգեստների վրայ աւելացնել բաւական քանակութեամբ շուփայ (աչքի դեղ)

1) Նրանց ասելով, կարծում եմ հեղինակը ակնարկում է հեծնողներին: Եւ հինգերորդ երկինքն է ասում, որովհետև մահմեդականները հաւատում են, որ քրիստոնեաները դրանից աւելի վեր դնալու արժանաւորութիւն չունեն:

աչքերի համար, հինա՝ ձեռքերն ու ոտները ներկելու համար, գոհարներ՝ քթի ու ականջների համար, գնդասեղներ՝ շապիկի համար, գօտի՝ մէջքի համար, և մատանիներ՝ թէ՛ ձեռքի և թէ՛ ոտի մատների համար:

«Որ, որովհետեւ մարգարիտը մի զարդ է, որի գործածելու իրաւունքը առանձնապէս արքաներին է, ուստի յիշեալ Հաջի Բարային նաեւ հրամայւում է՝ փնդուել և սեփականել այնպիսի մարգարիտներ կամ շարուած մարգարիտներ՝ որպիսիքը կարող են ծառայել որպէս յարմար ընծաներ ֆրանկների թագաւորի համար, և եթէ վերջերս Բահրէյնի արքայական մարգարտորաութեան ժամանակ գտնուել է մի հատ նշանաւոր մարգարիտ՝ նրան հրամայւում է այդ մասին հաղորդել մեզ:

«Հաջի Բարային հրամայւում է, նաեւ մի ժողովածու կազմել գեղեցկագոյն փերուզաներից, որոնք պիտի հին հանքի արտադրութիւններ լինին, որպէսզի, երբ Անգլիայի վեհապետը իր օգոստափառ անձի վրայ կրէ դրանց, ինքն էլ, իր գերդաստանն էլ պաշտպանուած մնան չար աչքի նետի հարուածից կամ դժբախտութիւն գուշակող նայուածքից»:

Վերոյիշեալ բաների վրայ աւելացրուած էին զանազան ուրիշ իրեր ևս, որոնցով Պարսկաստանը նշանաւոր է. ինչպէս զրահներ, թրեր, գեղադրութեան նմոյշներ, գրիչ-թանաքամաններ, նկարներ և առանձին դօրութիւններ ունեցող թալիսմաններ:

Վերջապէս, ինձ գրեթէ լիազօրութիւն էր տրուած ձեռք բերել Շահի գործածութեան համար ամեն բան՝ որ արժանի կը լինէր ընծայուելու մի թագակիր գլխի:

Գլ. Բ.

Հաջի Բաբան նկարագրում է այն ձեւը, որով ինքն ընծաներ է ժողովում:

— Նա ստրուկներ է ընտրում անգլիացուց Շահի համար:

— Երբ ես քաղաքապետին ցոյց տուի ինձ տրուած հրահանգները, նա զարմանքից համրացաւ, և, ինչպէս սովորաբար տեսում է՝ նրա գլուխը պտոյտ եկաւ:

Նա արքունի գանձապահի որդին էր. հետեալքար ինքն իրեն շատ մեծարոյ, շատ կարեւոր անձնաւորութիւն էր համարում, և նա անչափ զարմացաւ, երբ տեսաւ թէ ինձ պէս մի մարդու՝ որը ցարդ մի աննշան անձն էր եղել, այժմ ինչպէս էր յանձնուել այդքան կարեւոր մի գործ, և բացի դրանից՝ ի-

բանից էլ աւելի բարձր էր համարուում և իր իշխանութիւնից դուրս:

Սակայն նա գիտէր, որ մեծ վէղերը բարեկամ չէր իր հօր հետ. ուստի նա զգաց որ, հրչափ էլ Սպահանում իմ ներկայութիւնը նուաստացուցիչ լինէր իրան, այնուամենայնիւ ինքը պարտաւոր էր, ըստ քաղաքականութեան պահանջման, քաղաքավարութեամբ վերաբերուել դէպի ան մեծ աստիճանաւորի ծառան՝ ինչպէս ինքս առանձին հոգ էի տանում, որ ինձ կոչէին:

— Յանուն Ալլահի, ռիտեղից ենք կարող գտնել այդ ամեն բաները, ասաց քաղաքագետը: Շահի ռայաթները (հպատակները) աղքատ են, և այստեղ նշանակուած իրերը կարող են միմեայն հարուստների մօտ ճարուել: Մեր խելքին հօ չէ գալիս որ կարողանանք դրանց ճարել:

— Քանի որ իմ միջամտութիւնը կայ այս գործի մէջ, պատասխանեցի ես, ես փողուց էլ պակաս կը լինիմ եթէ... բայց ահաւասիկ Շահի ֆիրմանը, և դուք գիտէք, իմ քաղաքագետ, որ եթէ այս իրերը գոյութիւն չունեն աշխարհի երեսին, այս ֆիրմանը նրանց դուրս կը բերի, թէկուզ հարիւր գազ խոր թաղուած լինին հողի տակ: Մի բռնակալ Շահ կարող է տաօրօրինակ հրաշագործութիւններ անել:

— Բնի, այդ ճշմարիտ է, ասանց նա՝ աչքերը հրահանգների վրայ դարձնելով. բայց Սպահանը հօ Նուրիա չէ, ուր մի բողոքում ուղածիդ չափ ստորովներ ճարուին. ոչ էլ Նէջդն¹⁾ է, ոչ էլ Գուկլանը, որ հարկաւորուած ժամանակ որքան ձիեր ուղես՝ ճարուին. ոչ էլ Բայրէջնի մարգարտի ափերն կան մեզ մօտ, ոչ Սորասանի փիրուզայի հանքերը: Մետաքսեղէն ու թաւշեղէն մենք ունենք, և յանուն Ալլահի վերցրէք ինչ տեսակը որ ունինք: Ալլի օրհնութեամբը բաղմաթիւ էլ դերձակներ ունինք, որոնք կարող են դրանցից զգեստներ պատրաստել, և ես ամենայն ուրախութեամբ յանձն կ'առնեմ կատարել տիեզերքի կենդրոնի պատուէրների այդ մասը. սակայն գալով քնացած մասին՝ մեր ձեռքերը կարճ են նրանց հասնելու և մենք մեր յոյսը պիտի դնենք նախախնամութեան վրայ:

Ես բաւական լաւ ճանաչում էի իմ հայրենակիցներին՝ իմանալու համար թէ՛ ի՞նչից էին առաջանում այդ դժուարու-

¹⁾ Նէջդ մի նագանդ է Արաբիայում, որտեղից գալիս են ամենանշաշուտը ձիերը. իսկ Գուկլանը՝ մի կտոր երկիր է Թիւրքմէնների մէջ, որ նոյնպէս նշանաւոր է իր ձիերով:

Թիւնները, ուստի ես կամացուկ շնչացի քաղաքապետի ականջին, հասկացնելով նրան, որ ես նրանցից չէի, որ բռիս միջինը թագցնէի, այլ, որ կամենում էի իրան էլ բաժին հանել այն օգուտներէն՝ որ ճակատագիրը մեզ կը պարգևէր:

Այս ասացի. թէ չէ, իսկոյն տեսայ, որ իրերը մի նոր ուղղութիւն ստացան. դժուարութիւնները վերացան, չքացան, և այն բաները, որ մի քանի բոպէ առաջ կարելի չէր ճարել՝ այժմ յանկարծ շատացան, առատացան:

Ստրուկներն այժմ լցուեցին տան մէջ, ամեն տեսակ ձիեր բերուեցին, մետաքսեղէն, թաւեղէն, շաւեղէն և գորգեր դիրկուեցին իմ սենեակի անկիւններում, և խումբ-խումբ վաճառականներ՝ Հնդկից, Բաղդադից և Խորասանից եկան ցոյց տալու ինձ իրանց ապրանքները:

Ի նկատի ունենալով որ ես մի անձն էի որ՝ այսպէս ասած՝ մաս էի կազմում էի այդ մտածուած դեսպանութեանը, և որ դրա վարկի բարձրանալը կամ նուազելը ինձանից էր կախուած, նայած թէ դա ինչ տեսակի ընծաներ էր տանելու իր հետ, ուստի ես շատ աշխատեցայ ստրուկների անյալիսի ընտրութիւն անել, որոնց լաւ յատկութիւնները հաճելի և օգտակար լինելով անգլիացոց Շահին՝ կարողանային բարեկամութիւն հաստատել երկու պետութիւնների մէջ:

Երկու սեռից էլ շատ ստրուկներ բերուեցին մօտս, որոնց դուրս էին բերել Սպահանի ականաւոր մարդկանց և վաճառականների հարեմներէից ու ընտանիքի միջից. բայց նրանցից շատ քչերը արժանացան իմ հաւանութեանը, որովհետեւ շատ քչերն էին կատարելագործուած այն արուեստների մէջ, որ ես կարծում էի կը գնահատուէր ֆրանկներէից:

Ի վերջոյ, ես ընտրեցի մէկը—մի եթովպացուհի, որը իրան զարմանալի կերպով սովորեցրել էր ապրել դրեթէ առանց ընելու—մի տարօրինակ սովորութիւն. և ինչ ժամանակ էլ որ նա մի քիչ քնում էր՝ նրա աչքերը բաց էին մնում: Ես մտածեցի, որ եթէ նա պառկէր անգլիացիների Շահի ննջարանի դռան՝ նա կարող կը լինէր աւելի լաւ հսկողութիւն կատարել, քան ամենակատաղի առիւծը: Նրա համար երաշխաւորում էին, որ իբր թէ քնած ժամանակ՝ չէր էլ խորմփացնում—հսկող ստրկուհու մի յատկութիւն՝ որ անկասկած նոյնքան կը գնահատուէր ֆրանկներէից, ինչքան գնահատուած էր Պարսկաստանում:

Ես ընտրեցի մի երկրորդը, որը յայտնի էր լաւ փլաւ պատրաստելու, ինչպէս և գրգռիչ բաներ բաղադրելու հմտութեամբ: Ասում էր, որ ով նրա ձեռքով պատրաստուած բաներից ուտում էր՝ երկու անգամ աւելի երկար էր ապրում:

քան որևէ ուրիշ անձ: Ես մտածեցի, թէ դա ամենամեծ պատիւը կը լինէր, որ մենք կարող կը լինէինք տալ մի թագակիր գլխի, որը, եթէ իրաւունքով դատելու լինինք, պէտք է երկու անգամ աւելի երկար ապրի քան ուրիշ մահկանացուները:

Այս երկուսի վրայ ես աւելացրի և՛ մի փահլէժման (ըմբիշ) որպէս նմուշ մեր արեւելեան հպատակների մարմնական ոյժի: Նա մի խափշիկ էր, որի ատամներին խարտոցով սղոցի ձև էին տուել, և որի բնաւորութիւնը անքան կատաղի էր, ինչքան իր կերպարանքը: Նա կարող էր իրան հաւասարակշիռ մարդուն գետին տապալել, կարող էր մի էջ վերցնել տանել, կարող էր մի ամբողջ ոչխար կլանել, կարող էր կրակ ուտել, և իր փորից շատրուանի պէս ջուր դուրս ցայտեցնել:

Ես բաւական բախտաւոր էի, որ կարողացայ դրանց ձեռք բերել. սակայն այնքան հեշտ չէր գտնել ա՛յն զոհարը, որ մեր աջքով տկարագոյն սեւի պատուի կատարելագործուած պահապանն է:

Սպահանում շատ քիչ հարեմներ կան որ այնքան նշանաւոր լինին որոնց վրայ հսկեն այդպիսի գոհարներ ¹⁾, որովհետեւ նրանք միայն իշխանական և աշխարհիս հարստութիւնը առատօրէն վայելող մարդկանց տան յաւելուածներն են:

Իմ հետազօտութիւնները հասան մինչև Շիրազ, որտեղի իշխան-քաղաքապետը, որը հռչակուած էր իր հարեմի փառաւորութեամբ, պահում էր մի քանիսը. բայց ո՞վ էր կարող համարձակուել և պնդել որ նա հրաժարուէր նրանցից մէկից, այն էլ ո՞ւմ համար, ի՞նչի համար—միմիայն անհաւատների յարմարութեան համար:

Մօտ էր որ յուսահատուէի, երբ մի օր իմ գաղտնի պատուիրակը ինձ հաւաստիացրեց թէ ինքը գտել էր այդպիսի մէկի տեղը, որի արժէքը անգնահատելի էր—ո՛չ յակիրթներով և ո՛չ էլ աղամանդներով կարելի էր գնահատել նրան: Եւ ինձ ասուեց որ նա ամենաքինախնդիրը և ամենաանողորբիւն էր իր տեսակի մէջ, ու այնքան սրատես էր, որպէս քաւթարին է (lynx) և այնքան էլ զգաստ էր, որպէս չաղալ. սակայն նրան սեփականացնելու համար հարկաւոր էր մի հնարք, որովհետեւ նա պատկանում էր Սպահանի օրէնքի գլխին—մի զառամեալ, ցնդած, նախանձոտ մարդ՝ որի բազմաթիւ կանայքը, ինչպէս ասուում էր, մի օրուայ ընթացքում նրան շատ աւելի աղ-

1) Նշանակում է կանանոցների վրայ հսկող, փորձուած, իրանց գործի մէջ ծեր ու հաւատարիմ ներքինիներ:

տեղութիւն էին կերցնում, քան մարդու կերցնում են մի ամբողջ տարուայ ընթացքում ւայն ձախորդութիւնները, որոնց առ հապարակ ենթարկւում են բոլոր մահականացուները:

Եւ շուտով տեսայ որ, այդ գոհարը ձեռք բերելու համար իմ արած բոլոր ջանքերն ու դիմումները անօգուտ էին, որովհետեւ ես գործ էի ունենում բաւական մեծ հեղինակութիւն ունեցող անձնաւորութեան հետ, և քանի որ ես գիտէի Շահի ցանկութիւնն էր լաւ յարաբերութիւն պահպանել օրէնքի թարգմանիչների հետ, ուստի ես այնքան մեծ խստութիւն գործ չդրի կատարել տալու ինձ տրուած պատուէրների այս մասը, ինչպէս որ պէտք էր անէի:

Ինչ և է, ես իրաւացի համարեցի մի սուրհանդակ ուղարկել մեծ վէզրի մօտ. յայտնել նրան եղելութիւնը և, խնդրել նրանից որ մի առանձին հրամանագրով՝ նա պահանջէր որ ինձ յանձնուէր այդ գոհարը, և որ, այդ հրամանագրի մէջ խիստ կերպով շեշտուած լինէր թէ՛ ոչ ոք այդ անձից զատ՝ յարմար չէր լինի հսկիչի և պահապանի պաշտօն ստանձնել Անգլիայի Շահի կանանցի վրայ:

Արածս այս քայլը շուտով ունեցաւ իր աշոյղ հետեանքը, և վերջապէս, օրէնքի գլուխը յուսահատ և խիստ նախանձալից սրտով զիջեց բաժանուել իր գանձից, և նա իմ ձեռքն յանձնեց Մորուարուն (մարգարիտ) այդ էր անունը:

Հետաքրքրուողներին բաւականութիւն տալու համար, ես ինձ թոյլ պիտի տամ նկարագրելու այդպիսի մի հազուագիւտ և ահագին այլանդակութեան նմոյշը:

Նախ և առաջ, նա մի ահագին գլուխ ունէր, որ դրուած էր մի բարակիկ, բազմակնճիւղ վզի վրայ, որը կարծես թէ չափից աւելի բարակ էր, ծառայելու որպէս պատուանդան:

Նրա երեսի վրայ կային բազմաթիւ խորշոմներ, ամբողջ դէմքը ներկայացնում էր թուլացած կաշու փոթ-փոթ՝ իրար վրայ կախուած ծալքեր:

Նրա աչքերը մեծ, ջրջրոտ և արիւնացայտ էին, և արտայայտում էին այն ծանր թմրութիւնը որ յատուկ է օձին:

Նրա քիթն էլ, դէ, միայն անունով էր քիթ—մի քիթ որ, մի խօսքով կատարելապէս համապատասխանում էր իր դէմքին: Բերանը, ճի, նրա բերանի վրայ էր որ գլխաւորապէս երևում էր նրա այլանդակութեան արժէքը, որովհետեւ դա աւելի նման էր մի ճեղքի, քան մի բացուածքի—վարի շրթութունքը, որ կախուած էր կզակի վրայ, ցոյց էր տալիս մի ներսի կողմը որը փտելու վրայ էր:

Մի խօսքով, Մորուարին կատարելութեան մարմնացումն

էր: Նրա ձայնն աւելի գորտի կոկոռցի էր նմանում, քան որնէ ուրիշ ձայնի, և երբ նրա դիմագծերը շարժւում էին և երբ միենոյն ժամանակ նա ճիգ էր գործ դնում իր թոքերի վրայ՝ պիտի դրականապէս ասել որ, *հէ մի կին, լինի դե կամ հրեշտակ՝ չէր կարող մի բոպէ համարձակուել նրա հանդէպ կանգնել:*

Ստրուկներ ընտրելու գործը վերջացրած լինելով՝ ես շուտով հաւաքեցի միւս ընծաները, և պատրաստուեցի վերադառնալ Թէհրան: Փողաքապետն ու ես, մեր ակնկալածից շատ աւելի մեծ անշուքեան էինք հանդիպել, որովհետեւ բոլորն իրար վրայ հաշուած՝ մենք բաւական խոշոր բան էինք կարողացել աւելացնել մեզ համար: Եւ ես տեսայ, որ մեծ վէզրի խօսքերը հաստատուեցին, որպէս ճշմարտութիւն, այդ իրակաւնացան նրանք, որովհետեւ, ինչպէս ընթերցողը կարող է յիշել՝ նա ինձ նախապէս ասել էր, որ ինձ յանձնուած գործի այս մասը չէր կարող շահ չունենալ ինձ համար:

Ես վճռեցի պահել բարեբախտութեանս (փողիս կամ հարստութեանս) այս մասը, որպէս պաշար ապագայ կարիքի հանդէպ, և ոչ թէ դրան շուայել ունայն բաների համար կամ անհաւատներ իրկիւրը գնալու համար ճանապարհածախս անել. *հէ ես վճռեցի ապահովացնել դրան կնքուած քսակների մէջ և թաղել մի քանի գազ խոր՝ մի ապահով և հեռու ընկած տեղում:*

«Ո՛չ ոք ինձանից շատ չպիտի իմանայ իմ գաղտնիքը, մտածեցի ես, և ինչ կուզի թող լինի, գուցէ չքաւորութեան օրը մի ժամանակ վրայ կը հասնի, բայց նա կը տեսնի որ Հաջի Բաբան լաւ զինուած է պաշտպանուելու իր խստութեան դէմ»:

Գլ. Գ.

Տեսնում է որ պարսիկներն ու անգլիացիները բոլորովին տարբեր՝ հակառակ զաղափարներ ունին ստրկապահութեան վերաբերմամբ:—Հաջի Բաբան նկարագրում է մի տեսակցութիւն անգլիական դեսպանի հետ:

Ընծաները հետո՝ ես անվտանգ ժամանեցի մայրաքաղաքը: Ստրուկներին ես տեղաւորուել էի զամբիւղներում, իսկ ստրուկներին՝ ձիերի կամ ջորիների վրայ: Գորգերը, շալերը և մետաքսները անձրեւից պաշտպանելու համար՝ փաթաթել էի մուշամմայի (մոմշոր, մոմագօծ կտաւ) մէջ և հակեր էի կապել:

խակ թանկագին քարերը կայլն լաւ ապահովացրել էի իմ խուրջիններում:

Նա ուղղակի գնացի մեծ վէղրի տունը, ուր և իջեցրի կառուանին ու խակոյն ներկայացայ նրան: Նա ինձ «բարի գալուստ» ողջունեց, երբ ես նրան մատուցի մի ընծայ, որ ես համարձակութեամբ հաւատացրի նրան՝ թէ միակ բանն էր որ ճակատագիրը գրել էր իմ տրամադրութեան տակ, թէպէտ միեւնոյն ժամանակ՝ ես գիտէի որ խուրջիններէս մէջ գտնուող մի քանի գաղտնի քսակները ծիծաղում էին նրա մօրուքի վրայ: Ապա ես նրան ներկայացրի մի մանրամասն ու ճշմարիտ հաշիւ ինձ յանձնարարուած գործերի կատարման մասին:

Նա ամենայն ճշտութեամբ ու զգուշութեամբ ստուգեց իմ մատուցած ընծայի արժէքը, նախ քան ուշադրութիւն դարձնելը այլ գործերի վրայ, և ի վերջոյ խրախուսեց ինձ բաւականութիւն արտայայտող ժպիտով ու նրա համապատասխան մեծարանքով—«Հաջի տեղդ շատ դատարկ էր մնացել»: Ապա նա սկսեց պատմել ինձ որ, վսեմապատիւ Միրզա Ֆիրուզը—նորընտիր ղեսպանը բոլորովին պարապ չէր մնացել իմ բացակայութեան միջոցին, այլ խիստ զբաղուած էր եղել պատրաստելով իր սեփական շքախումբը կայլն, և որ, միակ գործը որ դեռ մնում էր անելու նախ քան նրա մեկնելը՝ այն էր որ նա պիտի հաղորդակցութիւն ունենար անգլիական ղեսպանի հետ այն նամակների վերաբերմամբ՝ որ պիտի ուղղուէին Ֆրանկների Շահին ինչպէս և նրա թագաւորական ատենին. բացի դրանից, ցոյց տար նրան այն զանազան իրերը, որ ընտրուել էին, որպէս ընծաներ ուղարկուելու վեհապետին:

Քանի որ նորագոյն ժամանակներում Պարսկաստանից ոչ մի ղեսպանութիւն չէր ուղարկուել անհաւատների մօտ, ուստի մենք խիստ մտահոգ էինք որքան կարելի էր, լաւ տպաւորութիւն թողնել նրանց՝ Ֆրանկների մտքերի վրայ մեր երկրի հարստութեան, զօրութեան, հանճարի ու ազնուամտութեան մասին:

Մեծ վէղիրը հրաւիրեց անգլիական ղեսպանին, որ մի առաւօտ նա այցելէ իրան որպէսզի ընծաները նրան ցոյց տրուէր: Միրզա Ֆիրուզին էլ պատուիրուեց այդ առաւօտ ներկայանալ: Դեռ ոչ մի ակնարկով ղեսպանին չէր հասկացրուել թէ ընծաները ինչերից էին բաղկացած, և մենք կարծում էինք, որ, բացի այնքանից որ նա դրսերից լսել էր՝ չգիտէր թէ իսկապէս ինչեր էր տեսնելու:

Նկաւ նա և ընդունուեց ղիվանխանէյում (ունկնդրութեան դահլիճում)—մի արարողութիւն՝ որ շատ քիչ անգամ

էր կատարում մեծ վէզիրը, որը շատ քիչ ցուցամու ծերունի էր, բայց որը, հարկաւոր համարեց այսպիսի դէպքում մի տեսակ պաշտօնական ցոյց անել:

Դահլիճի դռսի վարագոյրը վեր քաշուած և առաստաղի պէս կապուած էր, մարմարեայ աւազանի շատրուանը խաղում էր, և մեծ-մեծ ամաններով մրգեղէն սառույցը վրաները դրուած՝ շարուած էին յատակի վրայ:

Երբ դեսպանը և իր հետևորդները նստեցին ու մեծ վէզիրը նրանց պատշաճ Քարի գալուտա՝ով ողջունեց, ինձ որ կանգնած էի ամենահեռաւոր ծայրում, պատուիրուեց նախ դեսպանին ներկայացնել պատրաստուած ընծաների ցուցակը, ապա ըստ կարգին ցոյց տալ նրանց:

Ստրուկներն ինչպէս և Մորուարին կանգնած էին ի սպաս: Նրանց հրամայուեց առաջ անցնել և շարան կանգնել աւազանի շուրջը: Հէնց որ դեսպանի աչքն ընկաւ ցուցակի վրայ՝ նա իսկոյն կանգ առաւ առաջին իրի վրայ և բացազանչեց:

— Վահ, այդ ի՞նչպէս է, ստրուկներ: Այդ չէ կարող պատահել, մենք ստրուկներ չենք պահում Անգլիայում:

— Այդ ի՞նչ խօսքեր են, ասաց վէզիրը հանդարտութեամբ. դուք ստրուկներ չունիք. ապա ի՞նչպէս էք անցկացնում, ով է ծառայում ձեզ:

— Մեր երկրում մենք բոլորս ազատ ենք, պատասխանեց դեսպանը, և ով էլ որ մեր երկիրն է գալիս՝ ազատ է:

— Բայց անտարակոյտ, ասաց վէզիրը. ձեր Շահը պիտի ստրուկներ ունենայ: Մի թագաւոր առանց ստրուկների: Դա նմանում է այն բանին, որ մարդ մարմին ունենայ առանց ձեռների ու ոտների: Ապա ով է հսկում նրա վրայ, երբ նա քրնում է:

— Ո՛չ ոք, պատասխանեց դեսպանը. մեր թագաւորը նոյնքան իրաւունք չունի ստրուկներ պահելու, որքան նրա հպատակները: Ի՞նչ որ դուք այստեղ գնելով էք անում, մենք մեր երկրում վարձելով ենք անում. բացի դրանից ոչ միայն մենք թոյլ չենք տալիս որ մեր մէջ գերիներ պահուին, այլ մեր թագաւորն էլ իր բոլոր ազդեցութիւնը գործ է դնում վերացնելու այդ սովորութիւնը օտար երկրներում ևս:

— Իրան, բացականչեց մեծ վէզիրը աչքերը չռելով ու բոլորովին ապշելով: Անշուշտ դուք չէք կարող այդքան անգութ լինել: Ապա ի՞նչ պիտի լինէին խեղճ ստրուկները եթէ նրանք ազատ մնային: Ո՛չ մի բան չէ կարող աւելի երջանիկ լինել քան մեր վիճակը, բայց եթէ նրանք թողնուեն իրանց ճա-

կատագրին, շուտով սովամահ կը լինին։ Նրանք մեր զաւակներն են, մեր ընտանիքի մի մասն են կազմում։

— Բայց դուք ոյժ ունիք նրանց սպանելու, ասաց դեսպանը։

— Սպանել նրանց, գոչեց վեզիրը. հիվ է այնքան յիմար որ ինքն իր ձեռքով իր տունը կրակ տայ, և հիվ է այն ապուշը որ յօժարութեամբ կորցնի՝ ձեռքից տայ իր ստրուկի գլինը։

Յաճնայն դէպս, նկատեց դեսպանը, դուք կարող էք նրանց ծեծել, երբ որ հաճենաք. և հչ ոք չէ կարող ձեզանից պահանջել թէ ինչ իրաւունքով էք ծեծում նրանց։

— Եւ հիվ է կարող ձեռքս բռնել, արգելել ինձ որ չծեծեմ որ և է մի ուրիշ ծառայի—լինի դա ստրուկ կամ ոչ ստրուկ, վրայ բերեց վեզիրը։ Բոլոր աստիճանի մարդիկը, ի հարկէ բացի Շահից՝ (որին Ալլահը պահպանի իր ողորմութեամբ) այստեղ մասն ունին իմ հրամայած ճիպտաներից—իմ՝ որ մինչև անգամ պալատական խոհարարի աշակերտի վեզիրն էլ եմ... Եւ եթէ այդպէս լինէր, հիվ էր կարող կենդանի մնալ այնպիսի խելագարների խմբերի մէջ՝ ինչպէս ենք պարսիկներս։

— Բայց, ասացի ես շատ խոնարհութեամբ,—բայց եթէ դեսպանը միայն գիտենար թէ այս ստրուկներն ինչ յատկութիւններ ունին, ես վստահ եմ, նա դէմ չէր լինի նրանց Անգլիա գնալուն։ Այս ստրուկների մէկի պաշտպանութեան տակ Անգլիայի Շահը կարող է այնքան ապահով քնել և անվտանգ մնալ դաւադրութիւնից՝ որքան եթէ նրա վրայ մի առիւծ լինի հսկող։ Սրանցից մէկի ձեռքով պատրաստուած կերակուրն էլ ուտելով՝ նա ամենակին չի մահանալ։

— Մեր ձեւերն ու սովորութիւնները տարբեր են ձերիններից, պատասխանեց դեսպանը շատ քաղաքավարութեամբ։ Մեր Շահը (Երկիրքն օրհնէ Նորին Մեծութեանը) այնպէս հանգիստ ու խաղաղ է քնում՝ ինչպէս իր հպատակները, առանց մէկի հսկողութեան. կարիքն զգալու։ Նա ուտում է իր կերակուրը առանց վախենալու թոյնից, և նա այնքան հաւատ է ընծայում իր խոհարարին՝ որքան ընծայում է իր մեծ վեզիրին։

— Ուրեմն, ասացի ես, նայեցէք այս համբաւաւոր փառլեմանին, որը կատարեալ Ասֆանդիար է ¹⁾—մարմինը պղինձ և ձեռքերը երկաթ է։ Անշուշտ դուք չէք մերժիլ նրան։ Նրա պէս մէկը հարկաւոր է ամեն Շահի տէրութեան համար։ Ահաւաստիկ նա՝ որը իր նմանը չունի։ Եթէ նա լաւ պահուի,

նա կարող է կուռել ինչ բանի հետ, որ նրան ղիմադրող ոյժ ցոյց կը տայ:

—Բալի, Ալլահի օրհնութեամբ, ասաց մեծ վէզիրը. նա շուտով իր վրայից կը ջնջի ամեն ինչ, որպէսզի Ֆրանսկ ծագում ունենայ: Նա մի կենդանի է, որ ակոռում պիտի պահուի:

—Մենք էլ ունենք մեր փահլէվաները, ասաց դեսպանը, բայց եթէ նրանք զրկուին իրանց ազատութիւնից՝ կը կորցնեն իրանց ոյժը: Ո՛չ որ չէ կարող ստրուկներ ընդունել. ուստի ես չեմ կարող համարձակուել որ մինչև անգամ այդ մէկը —այդ փահլէվանը ուղարկուի մեր Շահին որպէս ընծայ:

—Օ՛, դա շատ զարմանալի բան է, միաձայն բացազանչեցինք բոլորս: Ամեն պարսիկ որ ներկայ էր՝ ապշեց. և Միրզա Ֆիրուզը կարծես թէ խիստ զայրացաւ որ զրկուեց ընծաները մատուցանելու օգտից—ընծաներ՝ որոնք, մենք կարծում էինք, կապահովացնէին մեր դեսպանութեան աշողութիւնը:

—Լսւ, բայց դուք չէք մերժիլ այս մէկին, ասաց վէզիրը մատնացոյց անելով Մորուարուն: Դուք չէք մերժել սրան՝ որ անգլին է, որի հաւասարը չկայ, որի նմանն ունենալու պարծանքը չէ կարող ունենալ նոյն իսկ մեր Շահը—աշխարհիս ապաւէնը:

—Մեր թագաւորը կարիք չունի այդպիսի մի պաշտօնեայի, ասաց դեսպանը: Մենք մինչև անգամ չգիտենք թէ դրա պաշտօնն ի՞նչ է, ո՛չ էլ գիտենք թէ դա ի՞նչ բանի համար է լաւ:

—Ո՛չ, ասաց մեծ վէզիրը, բայց ձեր թագաւորը—յանուն օրհնեալ Մարգարէի—ունի իր կանայքը. ուստի նա պէտք է ունենայ պահապաններ նրանց վրայ հսկելու: Ո՛չ մի կին չէ կարող առանց պահապանի ապրել (միկնոյն ժամանակ իր շուրջը նայելով ներկայ եղողների հաւանութիւնը ստանալու). ո՛չ մի կին, այո՛, չէ կարող առանց պահապանի ապրել, ինչպէս որ ո՛չ մի պտղապարտէզ չէ կարող ապահով լինել առանց պատեր ունենալու:

—Այդ ի՞նչ խօսքեր են, էլ կասկած կայ, միաբերան գոչեցին ներկայ եղողները (որովհետեւ դա միայնքան ընդունուած բան էր, որ էլ կասկած չկար դրա մէջ. անհերքելի իրողութիւն էր). բայց անգլիական դեսպանը նրանց ընդհատելով՝ ասաց.

1) Պարսից պատմութեան, մէջ Ասֆանդեարը Քիթշապի որդին էր. նա կոչւում էր «Պընձամարմին», որովհետեւ նա շատ ուժեղ էր: Նա համարւում է պարսիկ հերոսներից մէկը: